Հավելված 4

Գնահատման նոր մեթոդաբանություն (հատված)

Գնահատման տեսակները

Սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք **տեսակ է** կիրառվում: Դրանք հաջորդում են մեկը մյուսին և կարող են պարբերաբար կրկնվել հետևյալ հաջորդականությամբ՝

1) հայտորոշիչ (դիագնոստիկ) գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում:

Հայտորոշիչ-ձևավորող-ամփոփիչ այս շղթան կարելի է մեկ դասի ընթացքում փուլերով կիրառել: Այդ փուլերը կարող են կարճատև ու երկարատև լինել՝ դասից մինչև ենթաթեմա, թեմա, կիսամյակ կամ տարի: Գնահատման տարբեր տեսակների ժամանակ կիրառվում են բազմազան գործիքներ, ընդ որում՝ միևնույն գործիքը կարող է կիրառվել գնահատման բոլոր տեսակների դեպքում: Կարևոր է, թե ինչ նպատակով է կիրառվում այդ գործիքը, և ինչպես են օգտագործվելու տվյալ գնահատման արդյունքները:

Գնահատման տեսակները կիրառվում են գնահատման բոլոր փուլերում: Փուլ կարող են համարվել ենթաթեման, թեման կամ թեմաները: Գնահատման փուլերի ընտրությունը կատարում է ուսուցիչը:

ՀԱՅՏՈՐՈՇԻՉ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայտորոշիչ գնահատման նպատակն է, ուսումնական գործընթացի որևէ փուլի ուսումնասիրման մեկնարկից առաջ բացահայտել սովորողի նախնական գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները: Ուսուցչի համար կարևոր է իմանալ, թե սովորողն ինչ գիտի **նոր ուսուցանվող թեմայի** վերաբերյալ, ինչը հնարավորություն է տալիս ճիշտ պլանավորելու ուսուցման և ուսումնառության բովանդակությունը, գործընթացը, ինչպես նաև ընտրե-

լու ուսուցման արդյունավետ ձևեր, միջոցներ ու մեթոդներ: Օրինակ՝ ուսուցիչը պարզում է, որ սովորողների մեծ մասը որոշ չափով տիրապետում է նոր թեմային, ունի որոշակի գիտելիքներ ու կարողություններ (նախորդ դասարաններում կամ ինֆորմալ տարբերակով ձեռք բերած), հետևաբար կարելի է հենվել դրանց վրա՝ զարգացնելով այդ թեմայի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ և դրանց կիրառման հմտությունները:

Վերը նշվեց, որ հայտորոշիչ գնահատումն իրականացվում է տարբեր ձևերով՝ համաձայն ուսումնասիրվող առարկայի, թեմայի ու սովորողների տարիքային առանձնահատկությունների: Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել նաև դասավանդվող նյութի ուսումնասիրման տևողությունը և ընտրել գնահատման տարբեր ձևեր, օրինակ՝ սովորողների նախնական գիտելիքների բացահայտման նպատակով կարելի է կիրառել կարճ թեստ՝ 3-4 հարցից բաղկացած: Այս կամ այն թեմայի վերաբերյալ սովորողների գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումներն ու արժեքները պարզելու համար նաև կարելի է կիրառել մտքերի տարափ, քարտեզագրում, փոխներգործուն նշանների համակարգ, ԳՈՒՍ, մտածիր–զույգ–կազմիր–կիսվիր, 5-րոպեանոց շարադրանք և այլ մեթոդներ: Երբեմն կարող է անհանգստության պատճառ լինել այն հանգամանքը, որ որոշ մեթոդների կիրառումը, օրինակ՝ փոխներգործուն նշանների համակարգ, մտածիր–զույգ–կազմիր–կիսվիր, կարող է շատ ժամանակ պահանջել: Այդ ժամանակ ուսուցիչը կարող է տարակուսել՝ արդյոք արժի՞ շատ ժամանակ տրամադրել հայտորոշմանը: Ուսուցիչը հայտորոշման որոշ ձևեր կամ մեթոդներ կարող է կիրառել նաև նախորդ դասի ավարտին՝ ժամանակ շահելով հայտորոշման արդյունքներն ամփոփելու և հաջորդ դասը պլանավորելու համար:

Հայտորոշիչ գնահատման ժամանակ միավոր չի տրվում: Հայտորոշիչ գնահատման որոշ դեպքերում ուսուցիչը կարող է տալ կողմնորոշիչ բալեր, նիշեր, որոնք չպետք է նույնացվեն 10 միավորային սանդղակի միավորների հետ: Այդ բալերն ուսուցչի համար են, որպեսզի օգնեն նրան ճիշտ հայտորոշելու կամ վերլուծելու սո-

վորողների գիտելիքները: Նիշերի կամ բալերի կիրառումը կօգնի ուսուցչին նաև պատկերացում կազմելու, թե յուրաքանչյուր սովորող ինչ մակարդակ է ունեցել թեմայի ուսուցման սկզբնական փուլում և ինչպիսի ձեռքբերումներ ունի թեմայի ավարտին:

Հայտորոշիչ գնահատման համար առաջարկվում են հետևյալ ձևերը՝

1. թեստ կամ գրավոր աշխատանք,
2. բանավոր հարցում,
3. գործնական աշխատանք,
4. այլ:

Ստորև ներկայացվում են հայտորոշիչ գնահատման ձևերի և մեթոդների կիրառման նկարագրություններ, որոնք թույլ կտան դրանք տեղայնացնելու և օգտագործելու առարկայական դաշտում:

Հայտորոշիչ թեստ

Հայտորոշման հաճախ կիրառվող ձևերից է **հայտորոշիչ թեստը**, որը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում ստուգելու յուրաքանչյուր սովորողի նախնական գիտելիքների մակարդակը թեմայի ուսումնասիրումից առաջ: Այն կարելի է կիրառել ուսումնական տարվա սկզբում կամ որևէ ուսումնական փուլից առաջ, որպեսզի ուսուցիչը, արդյունքների հիման վրա, ճիշտ պլանավորի իր հետագա անելիքները, ուսուցման և ուսումնառության գործընթացը: Հայտորոշիչ թեստ նախագծելիս շատ կարևոր է հաշվի առնել դրանում ընդգրկված առաջադրանքների քանակը, տեսակը, բարդության աստիճանը, ինչպես նաև այդ առաջադրանքների համամասնությունը: Հայտորոշիչ թեստի հարցերի քանակը կախված է մեկնարկվող փուլի տևողությունից: Փուլը, եթե կարճ է (դաս, մի քանի դաս) կամ բովանդակային առումով փոքր (առանցքային հասկացություն, ենթաթեմա և այլն), ապա հարցերը և առաջադրանքները կարող են լինել փոքրաթիվ՝ 3-5 առաջադրանք, կարճ ժամանակում

կատարելու համար, իսկ երկարատև փուլի կամ ծավալուն թեմայի համար կարող են լինել քանակով ավելի շատ և ավելի երկար ժամանակում կատարելու համար: Երկարատև փուլի համար անցկացվող հայտորոշիչ թեստի առաջադրանքների քանակը կախված է սովորողների տարիքային խմբի և դասավանդվող թեմայի առանձնահատկություններից, սակայն առաջադրանքների կատարման ժամանակը չպետք է գերազանցի 30 րոպեն: Թեստի կատարմանը հատկացվող ժամանակը որոշվում է թեստում ընդգրկված առաջադրանքներից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ ժամանակը հաշվի առնելով, որն էլ կախված է այդ առաջադրանքներից յուրաքանչյուրի բարդության աստիճանից. որքան բարդ է առաջադրանքը, այնքան դրան հատկացվող ժամանակը կարող է երկար լինել:

Հայտորոշման նպատակով կազմված թեստը չի կարող կիրառվել թեման ամփոփելիս՝ ամփոփիչ գնահատման ժամանակ, քանի որ գնահատման այդ երկու տեսակների նպատակները տարբեր են: Հայտորոշիչ գնահատման դեպքում ուսուցիչը նպատակ ունի բացահայտելու ուսուցանվող նոր թեմայի վերաբերյալ սովորողի ընդհանրական պատկերացումները, հետևաբար հարցերը և առաջադրանքները կազմվում են այնպես, որ դրանց կատարման համար բավարար լինի նախատեսվող թեմայի վերաբերյալ մակերեսային, այլ ոչ խորքային իմացություն, իսկ ամփոփիչ գնահատման դեպքում ուսուցչի նպատակն է ստուգել, թե սովորողները թեման անցնելուց հետո յուրացրե՞լ են թեմայի առանցքային, հիմնական հասկացությունները, ինչպես նաև ստուգել առավել խորքային իմացությունը: Այս նպատակով հարցերի և առաջադրանքների բովանդակությունն էապես տարբերվում է հայտորոշման նպատակով տրվող առաջադրանքների բովանդակությունից: Բացի այդ, հայտորոշիչ գնահատման դեպքում թեստում կարելի է ընդգրկել միայն պարզ ու միջին բարդության առաջադրանքներ, իսկ ամփոփիչ գնահատման դեպքում՝ պարզից բարդ առաջադրանքներ:

Թեստը կիրառվում է գնահատման բոլոր տեսակների դեպքում: Թեստն ունի հատկորոշիչներ, այսպես կոչված, «թեստի անձնագիր»

կամ «նախագիծ», որում նշվում է ամեն ինչ թեստի կառուցվածքի ու բովանդակության վերաբերյալ: Ընդ որում՝ հատկորոշիչներից կարող ենք հասկանալ գնահատման տեսակը: Ստորև ներկայացվում են թեստի ընդհանրական հատկորոշիչները, ինչպես նաև հայտորոշիչ թեստի առանձնահատկությունները:

Թեստի ընդհանրական հատկորոշիչներն են՝

1. դասարանը,
2. նպատակը,
3. թեման կամ թեմաները,
4. առաջադրանքների տեսակները,
5. առաջադրանքների բարդության աստիճանը և համամասնությունը,
6. առաջադրանքների քանակը,
7. հատկացվող ժամանակը:

Հայտորոշիչ թեստի առանձնահատկությունները

1. Ստուգվում են սովորողների ընդհանրական, ֆոնային գիտելիքները մեկնարկվող նոր թեմայի կամ թեմաների վերաբերյալ:
2. Օգտագործվում են մեկ ճիշտ պատասխան պահանջող՝ բազմակի ընտրության, լրացման, հաջորդականության վերականգնման կամ համապատասխանեցման ու կարճ պատասխանով առաջադրանքներ:
3. Հարցերը ձևակերպվում են կարճ, պարզ ու մատչելի:
4. Առաջադրանքները պետք է դասավորված լինեն պարզից միջին բարդության:
5. Հայտորոշիչ թեստերում ցանկալի չէ ներառել բարդ առաջադրանքներ, սակայն կարելի է մեկ կամ երկու հարցով ստուգել նաև նախատեսվող թեմայի վերաբերյալ որոշ սովորողների մտածողության ավելի բարձր կարողությունները՝ նրանց ներուժը բացահայտելու նպատակով:

Հայտորոշում իրականացնելուց հետո ուսուցիչն ընդհանրացնում է և՛ առանձին սովորողների իմացության մակարդակն ուսուցանվող թեմայից, և՛ դասարանի ամբողջական պատկերը: Այստեղ կարելի է օգտվել «Սխալների քարտեզագրում» աղյուսակից, որում պարզորոշ արտացոլվում են հայտորոշիչ թեստի արդյունքները:

Սխալների քարտեզագրում կարելի է կիրառել նաև ամփոփիչ գնահատման արդյունքները վերլուծելիս, սակայն չպետք է մոռանալ, թե արդյունքներն ինչ նպատակով պետք է օգտագործել: Մի դեպքում հայտորոշիչ թեստի արդյունքներն օգտագործվում են ուսուցումն ու ուսումնառությունը ճիշտ պլանավորելու, բովանդակությունը սահմանելու, ինչպես նաև համապատասխան և արդյունավետ մեթոդներ ընտրելու համար, իսկ ամփոփիչ գնահատման արդյունքներն օգտագործվում են սովորողի՝ թեմայի յուրացման արդյունքներն ամրագրելու և հաշվետվության նպատակով:

Բանավոր հարցում (հայտորոշում)

Հայտորոշիչ գնահատման նպատակով իրականացվող բանավոր հարցման հիմնական մոտեցումը հարցեր ուղղելն է սովորողին, խմբին կամ ամբողջ դասարանին: Հարցերը պետք է լինեն պարզ ու միջին բարդության, որոնք պետք է ձևակերպված լինեն հստակ, պարզ ու միայն այդ թեմային վերաբերող՝ բարդության առաջին կարգի հարցեր:

Բանավոր հարցման համար նպատակահարմար է կիրառել նաև որոշ մեթոդներ, օրինակ՝ մտքերի տարափը, մտքերի քարտեզագրումը, ԳՈՒՍ-ը կամ մտածիր–զույգ կազմիր–կիսվիր մեթոդները և այլն: Այս մեթոդներով ուսուցանվող թեմայի վերաբերյալ սովորողների նախնական գիտելիքներն ստուգելուց հետո անհրաժեշտ է վերլուծել և անդրադառնալ արդյունքներին՝ տվյալ փուլի թեմայի կամ դասի ավարտին: Օրինակ՝ պետք է պահպանել պաստառը, որի վրա երևում են մտքերի տարափի արդյունքները, այնուհետև դասի կամ թեմայի վերջում քննարկել սովորողների հետ: ԳՈՒՍ-ի աղյուսակը

նույնությամբ կարելի է փակցնել դասարանի պատին և պարբերաբար անդրադառնալ ու վերլուծել, թե ինչ գիտեին, ինչ սովորեցին և ինչ արդյունքի հասան: Շատ ընդունված ու կիրառելի է մտածիր–զույգ կազմիր–կիսվիր մեթոդը: Սովորողներն իրենց հատկացված ժամանակի ընթացքում մտածում են ներկայացվող թեմայի կամ հարցի շուրջ, զույգ են կազմում ու պարզաբանում, թե ինչ գիտեն տվյալ թեմայի կամ դասանյութի վերաբերյալ:

Բանավոր հարցումը, սակայն, հնարավորություն չի տալիս միաժամանակ ստուգելու և ամրագրելու բոլորի նախնական գիտելիքներն ու հմտությունները:

Գրավոր աշխատանք (հայտորոշում)

Բանավոր հարցումը և գրավոր աշխատանքը կիրառվում են գնահատման 3 տեսակներում՝ կախված նպատակից: Գրավոր աշխատանքի ձևեր են՝ թելադրությունը, շարադրությունը, փոխադրությունը, էսսեն, թեստը, բաց հարցերով կարճ շարադրանք պահանջող առաջադրանքները: Հայտորոշման նպատակով, օրինակ, ուսուցիչը կարող է ընտրել թելադրության նյութ, որի միջոցով ուզում է ստուգել կետադրության կիրառության մասին սովորողների գիտելիքները: Նշանակում է այդ տեքստում պետք է առկա լինեն կետադրական նշանների բազմաթիվ կիրառություններ: Ինչպես հայտորոշիչ թեստի արդյունքներն են գրանցվում սխալների քարտեզում, այնպես էլ գրավոր աշխատանքների արդյունքները պետք է վերլուծվեն, որպեսզի ուսուցիչը նոր դասը պլանավորելիս անդրադառնա այդ սխալներին ու բարելավման ուղիներ ընտրի: Գրավոր աշխատանքների միջոցով կարելի է ստուգել բազմաթիվ ուղղագրական կանոններ ու գիտելիքներ:

Գրավոր աշխատանքի կիրառելի ձև է նաև կարճ փոխադրությունը կամ շարադրությունը՝ սովորողի ստեղծագործական, վերլուծական մտքի ընթացքը, միտքը շարադրելու, փաստերը հիմնավորելու, քննադատական կարողությունները ստուգելու նպատակով:

Ուսուցիչը կարող է որպես հայտորոշիչ աշխատանք կիրառել նաև արտագրությունը՝ սովորողի պատկերային հիշողությունն ու հիշողության ծավալն ստուգելու նպատակով:

Գործնական աշխատանք (հայտորոշում)

Գործնական աշխատանքը նույնպես կարելի կիրառել հայտորոշման նպատակով՝ կախված ուսումնասիրվող առարկայի և ուսուցանվող թեմայի առանձնահատկություններից: Գործնական աշխատանքի միջոցով հայտորոշում կարելի է իրականացնել՝ որոշելու համար, թե գործնական ի՞նչ հմտությունների և կարողությունների է տիրապետում սովորողը, որոնք կարող են հիմք դառնալ մեկնարկվող թեմայի ուսումնասիրման համար:

Որոշ ուսումնական առարկաների, ինչպիսիք են՝ «Տեխնոլոգիան», «Շախմատը», «Երաժշտությունը», «Կերպարվեստը», «Ֆիզիկան», «Քիմիան» «Բնագիտությունը» և այլն, ուսումնասիրման ժամանակ առավել կարևորվում է գործնական կիրառությունը: Հետևաբար, այս առարկաներում հայտորոշման համար նպատակահարմար է կիրառել գործնական աշխատանք: Օրինակ՝ բնագիտական առարկաներ անցնելու սկզբնական փուլում բնության ուսումնասիրման մեթոդների՝ դիտման, փորձի, չափումներ կատարելու նախնական գիտելիքներն ու հմտությունները վեր հանելու նպատակով, սովորողներին կարելի է հանձնարարել պարզ դիտումներ կատարել, նշել ժամանակի, ջերմաստիճանի, զանգվածի չափման սարքերի անվանումները, կատարել չափումներ՝ քանոնի, վայրկենաչափի, ջերմաչափի, կշեռքի և այլնի օգնությամբ, ինչպես նաև ստուգել անվտանգության որոշ կանոնների իմացությունը և այլն:

Մեծ ուշադրություն պետք է դարձնել փորձերի ժամանակ գործնական հմտությունների զարգացմանը: Շատ կարևոր է մինչև թեմայի դասավանդումը հայտորոշել, թե սովորողներն ինչ նախնական պատկերացում ունեն փորձերի ժամանակ կիրառվող սարքերի, քիմիական նյութերի, անվտանգության կանոնների պահպան-

ման մասին և դրանց կիրառության ինչ հմտությունների են տիրապետում:

Անկախ այն բանից, թե հայտորոշիչ գնահատում իրականացնելիս հայտորոշման ինչ ձև է ընտրում և իրականացնում ուսուցիչը, հայտորոշումից հետո պետք է կատարվի արդյունքների մանրամասն վերլուծություն՝ հետագա աշխատանքներն արդյունավետ պլանավորելու և իրագործելու նպատակով:

Հայտորոշիչ գնահատում իրականացնելու քայլաշար

1. Հստակեցնել հայտորոշիչ գնահատման նպատակը. ինչո՞ւ պետք է այն իրականացնել:
2. Պարզել, թե ուսումնական ո՞ր փուլի (դասի, ենթաթեմայի, թեմայի, կիսամյակի) մեկնարկից առաջ պետք է ստուգել սովորողների նախնական գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների ձևավորման մակարդակը:
3. Ընտրել հայտորոշիչ գնահատման ձևը՝ հաշվի առնելով ուսումնական առարկան, թեման, սովորողների տարիքային առանձնահատկությունները:
4. Եթե կարճ ժամանակի ընթացքում պետք է բացահայտել դասարանի բոլոր սովորողների գիտելիքների մակարդակը նոր ուսուցանվող թեմայի վերաբերյալ, ապա նպատակահարմար է կիրառել հայտորոշիչ թեստ՝ տարբեր առաջադրանքներից կազմված: Հայտորոշիչ թեստ կազմելուց առաջ անպայման պետք է կազմել թեստի նախագիծ՝ ըստ հատկորոշիչների:

Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատման նպատակն է բացահայտել ողջ դասարանի և յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները՝ ուսուցման և ուսումնառության գործընթացը

բարելավելու համար: Ձևավորող գնահատումը չի ենթադրում տարբեր սովորողների ուսումնական արդյունքների համեմատում, այլ ապահովում է սովորողի՝ տվյալ պահի ուսումնական ձեռքբերումների համեմատությունը նրա նախկին ձեռքբերումների հետ:

Ձևավորող գնահատումն իրականացվում է 1-12-րդ դասարաններում:

Ձևավորող գնահատումը ստորև բերվող 5 բաղադրիչների ուսուցչի պլանավորած և պարբերաբար օգտագործումն է ամենօրյա աշխատանքում.

- ուսման հանդեպ մոտիվացիայի բարձրացման նպատակով սովորողների ակտիվության ապահովում ուսումնառության գործընթացում,
- սովորողների ինքնագնահատման ունակության ձևավորում,
- սովորողների փոխադարձ գնահատման ունակության ձևավորում,
- հետադարձ կապի արդյունավետ ապահովում,
- ուսումնական գործընթացի ճշգրտում ու շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդներն ընտրում է ուսուցիչը, դրանք քննարկվում են մեթոդական միավորման նիստում, ընդունվում են մանկավարժական խորհրդի նիստում և կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում, մանկավարժական խորհրդի որոշումով:

Ձևավորող գնահատման ձևերն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, ուսուցանվող նյութի բովանդակությունը և սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) գրավոր կարճ հարցում (թեստ),

2) բանավոր հարցում,

3) գրավոր աշխատանք (թելադրություն, փոխադրություն, շարադրություն, արտագրություն և այլն),
4) գործնական աշխատանք,
5) տնային աշխատանք,
6) նախագծային աշխատանք,
7) և այլն:

Ուսուցչի և սովորողի միջև ապահովվում է հետադարձ կապ, բացահայտվում է, թե առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն ինչ դժվարություններ ունի: Դրա հիման վրա որոշվում են ուսուցման և ուսումնառության կազմակերպման հարմարեցումներն ու փոփոխությունները՝ սովորողի ուսումնառության արդյունքները բարելավելու համար:

Ձևավորող գնահատման ձևերն ու գործիքները կարող են կիրառվել ինքնագնահատման ու փոխադարձ գնահատման նպատակով: Ձևավորող գնահատում իրականացնելիս օգտագործվում են ուսման ընթացքում սովորողի ձեռքբերումներն ու դժվարությունները նկարագրող վերլուծություններ, մեկնաբանություններ: Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի տրվում:

Ձևավորող գնահատումն ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ հարցերին՝

- սովորողները հասկացե՞լ են անցած նյութը,
- ինչպե՞ս կարելի է ստուգել,
- սովորողների համար ո՞ր առաջադրանքն էր դժվար,
- ի՞նչը պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Չափազանց կարևոր է սովորողների ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին: Այս առումով ձևավորող գնահատման ճիշտ կիրառումը կապահովի նրանց ցանկալի ներգրավվածությունն ու ակտիվ մասնակցությունը: Այդ նպատակով վերջնարդյունքները, ինչպես նաև դրանց գնահատման չափանիշները պետք է հասկա-

նալի լինեն սովորողներին: Նպատակներն ու վերջնարդյունքները կարելի է ներկայացնել, որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները: Ձևավորող գնահատումն իրականացնում են ուսուցիչն ու սովորողը՝ ինքնագնահատման, փոխադարձ գնահատման միջոցով:

Ինքնագնահատում

Ինքնագնահատումը ձևավորող գնահատման կարևոր բաղադրիչներից է, որի նպատակն է՝ ընդլայնել սովորողի ճանաչողության սահմանները, արժեքային համակարգը, ինչպես նաև ձևավորել պատասխանատվության զգացում:

Ինքնագնահատման կարևոր առանձնահատկությունը գնահատողի դերի ստանձնումն է, այն ստանձնում է սովորողը:

Սովորողի ուսումնական առաջընթացի համար կարևոր են նրա ճիշտ պատկերացումներն ուսումնական նյութի իմացության ու սեփական ուժերով թերությունները վերացնելու կարողության մասին: Այդ նպատակներին է ծառայում ինքնագնահատման կանոնավոր կիրառումը:

Ինքնագնահատումը սովորողից պահանջում է իր կատարած աշխատանքների նկատմամբ հետադարձ դատողություններ անելու կարողություն, որն արդյունավետ սովորելու կարևոր պայման է:

Սովորողի ինքնագնահատման գործում կարևոր դեր է վերապահված ուսուցչին: Նա պետք է օգնի սովորողին հասկանալու, թե ինչին և ինչպես պետք է հասնել: Նպատակը սովորողին բացատրելուց հետո, ուսուցչի հաջորդ խնդիրը սովորողի անելիքները պարզաբանելն է, որոնք նրան պետք է հասցնեն հաջողության: Ինքնագնահատման հմտությունների ձևավորումը սովորողին հնարավորություն է տալիս դատողություններ անելու իր ձեռքբերումների վերաբերյալ, համեմատելու իր ներկա և պահանջվող մակարդակները, հեշտությամբ վերացնելու սեփական թերությունները:

Ինքնագնահատում իրականացնելու համար կարելի է կիրառել ձևավորող գնահատման տարբեր գործիքներ, օրինակ, հարցաթերթեր, գնահատման անիվ, ստուգաթերթեր, ելքի քարտեր, սանդղակներ և այլն: Ձևավորող գնահատման յուրաքանչյուր գործիք կարելի է կիրառել ինքնագնահատման նպատակով: Կարևոր է, որ ամեն գործիք կիրառելիս պահպանվեն ու կիրառվեն գնահատման նույն չափանիշները:

Փոխադարձ գնահատում

Փոխադարձ գնահատման միջոցով ևս սովորողները տեղեկանում են իրենց աշխատանքի ուժեղ ու թույլ կողմերի, սխալների մասին, անհրաժեշտության դեպքում ստանում են լրացուցիչ առաջադրանքներ և հանձնարարություններ՝ բացթողումները լրացնելու համար:

Փոխադարձ գնահատում իրականացնելիս պետք է՝

1. սովորողը գնահատի սովորողին,
2. խումբը գնահատի խմբին,
3. սովորողը գնահատի խմբին,
4. խումբը գնահատի սովորողին:

Կարևոր է, որ ուսուցիչը կամ դասընկերն ապահովի սովորողի առաջընթացը խթանող հետադարձ կապ. դա կօգնի սովորողին, որ գնահատի իր ուսումնառության ընթացքը: Էական է, որ փոխստուգում իրականացնող սովորողն իր դասընկերոջ աշխատանքը գնահատելիս լինի օբյեկտիվ: Այս գործընթացը զարգացնում է սովորողի մտածողությունն ու տրամաբանությունը: Ամեն անգամ սովորողն ընկերոջ սխալները նկատելիս կատարում է համապատասխան պարզաբանումներ, բերում հիմնավորված ու փաստարկված օրինակներ: Այդպիսով բարձրանում է իր իսկ ուսումնառության արդյունավետությունը, և արժևորվում են նրա գիտելիքներն ու հմտությունները:

Վերլուծվում և օգտագործվում են փոխադարձ գնահատման արդյունքները հետագա գործունեության ընթացքում:

Ինքնագնահատման ու փոխադարձ գնահատման գործիքների հղումներ՝

https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_10.html
https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_4.html
https://kznakgnahatum.blogspot.com/p/5_8.html
https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_13.html
https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_28.html
https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_98.html

Հետադարձ կապ

Ձևավորող գնահատման բաղադրիչների շրջափուլում կարևոր է հատկապես հետադարձ կապը: Յուրաքանչյուր աշխատանքի ընթացքում ու դրանից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորել իրենց ձեռքբերումները, աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումներն ու բարելավեն իրենց բացթողումները:

Հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակն ակնկալվող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

Հետադարձ կապն ուսուցման և ուսումնառության անբաժանելի մասն է: Որքան այն արդյունավետ է, որքան շեշտադրվում են սովորողների ձեռքբերումները, և իրականացվում է աշխատանքի պատշաճ վերլուծություն, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ նրանք շարունակաբար կբարելավեն իրենց առաջադիմությունը:

Գրավոր կարճ հարցում (ձևավորող գնահատման թեստ)

Ձևավորող գնահատում իրականացնելիս կիրառվող թեստը հնարավորություն է տալիս ուսուցչին կարճ ժամանակահատվածում և փոքր չափաբաժնով պարզելու ուսումնական նյութի յուրացման մակարդակը և տրամադրելու արդյունավետ հետադարձ կապ՝ նշելով այն ուղիները, որոնցով սովորողները կարող են բարելավել իրենց ուսումնառությունը:

Ստորև տրված են ձևավորող գնահատման թեստի առանձնահատկությունները:

- Նախատեսվում է կարճ ժամանակի համար (5-10 րոպե):
- Կազմվում են նույն գիտելիքը, կարողությունը կամ հմտությունը ստուգող հարցեր կամ առաջադրանքներ (2-3 հարց կամ մեկ պարզ առաջադրանք):
- Հարցերը մատչելի են սովորողների մեծ մասի համար, արդյունքները հեշտ վերլուծելի են:
- Ստուգվում են տեղում, հետադարձ կապը տրվում է անմիջապես:

Թեստի արդյունքների ստուգումը կարելի է իրականացնել տարբեր եղանակներով, օրինակ, ուսուցիչը կարող է առաջադրանքների ճիշտ պատասխանները նախապես գրել գրատախտակին կամ ցուցապաստառին, դրանք սովորողներին ցույց տալ առաջադրանքն ավարտելուց հետո: Սովորողները հնարավորություն կունենան համեմատելու իրենց աշխատանքի արդյունքները ճիշտ պատասխանների հետ և ինքնուրույն շտկելու բացթողումները: Նրանք այս դեպքում իրականացնում են ինքնագնահատում: Նույն օրինակով կարող են իրականացնել նաև փոխադարձ գնահատում:

Բանավոր հարցում (ձևավորող գնահատում)

Ձևավորող գնահատման ձևերից մեկը բանավոր հարցումն է, որի նպատակն է՝ պարզել սովորողի մտքերը քերականորեն ու

շարահյուսորեն ճիշտ ձևակերպելու, խոսքը տրամաբանորեն շարադրելու, համառոտ և ընդարձակ ձևակերպելու (ըստ անհրաժեշտության), գլխավոր միտքը դուրս բերելու, փաստարկելու, վերլուծելու և հիմնավորելու, ինչպես նաև հաղորդակցվելու կարողությունները:

Բանավոր հարցման ձևեր են՝ մտքերի տարափը, հարց ու պատասխանը, զրույցը, ուսումնական նյութի վերարտադրումը, բանավեճը, մենախոսությունը, երկխոսությունը, նախագծերի ներկայացումը, դերային խաղը, շնորհանդեսները և այլն:

Բանավոր հարցման ընթացքում կարող են կիրառվել բանավոր խոսքի գնահատման տարբեր սյունակներ (ռուբրիկներ)՝ ելնելով նպատակից ու բանավոր տրված հարցերից: Հարցերի միջոցով կարելի է պարզել ուսուցանված թեմայի կամ քննարկման ենթակա նյութի յուրացման աստիճանը: Դա կարելի է անել առանձին սովորողներին տրված կամ դասարանին ուղղված տարբեր հարցերի միջոցով:

Բանավոր հարցման ձև է նաև տեքստի բովանդակության մասին սովորողների՝ միմյանց տրվող հարցերը: Դրանք կարող են տարբեր լինել (ըստ դասարանի և նպատակի). պարզից բարդ՝ ո՞վ, ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ, ինչո՞ւ, ինչպե՞ս, ինչի՞ համար, ի՞նչ պատճառով և այլն: Հարցման մյուս տարբերակում ընթերցելուց հետո ուսուցիչն է հարցեր ուղղում սովորողներին:

Գրավոր աշխատանք

Ձևավորող գնահատում է գրավոր աշխատանքը, որի նպատակը սովորողի մտքերը գրավոր արտահայտելու հմտությունները զարգացնելն է: Ձևավորող գնահատման ընթացքում կարող են տրվել հետևյալ գրավոր աշխատանքները՝ արտագրություն, թելադրություն, շարադրություն, էսսե, փոխադրություն և այլն: Դիտարկենք թելադրությունը՝ ձևավորող գնահատման տեսանկյունից:

Երեխային աստիճանաբար ակտիվ սովորող դարձնելու համար ուսուցիչը կարող է նրա աշխատանքային տետրում նշումներ չկա-

տարել, այլ կանաչ գրիչով դուրս գրել սովորողի սխալները, վրիպակներն ու ջնջումները, գրել ճիշտ տարբերակը, առաջադրանք տալ, որ դրանք տեքստում ինքնուրույն գտնի և ուղղի: Առաջադրանքը կատարելու համար սովորողը «ստիպված է լինելու» առնվազն մի քանի անգամ կարդալ տրված օրինակները, տեքստում դրանք գտնել և ինքնուրույն ուղղել: Դա ոչ թե մեխանիկական, այլ ակտիվ մտավոր աշխատանք է (տվյալ դեպքում՝ համեմատում): Այս դեպքում ուսուցչի և սովորողի գործողությունները հավասարակշռվում են: Այս և այլ տարբերակներ կարելի է գտնել հետևյալ հղմամբ՝

https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_69.html

Ուսուցիչն ավելի ակտիվ դեր է տալիս սովորողին, որն արդեն ոչ միայն ինքնուրույն կողմնորոշվում, այլև ինքնուրույն բարելավում է սեփական աշխատանքը՝ առաջնորդվելով ուսուցչի պայմանական նշաններով: Գնահատման նույն սկզբունքները կարելի է կիրառել բոլոր գրավոր աշխատանքները հանձնարարելիս: Կարևոր է պահպանել ձևավորող գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին: Առհասարակ, յուրաքանչյուր աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները:

Գործնական աշխատանք

Սովորողի ձեռք բերած գիտելիքները հիմնավոր և օգտակար կլինեն այն դեպքում, եթե նա կարողանա դրանք կիրառել: Այդ գիտելիքները կիրառելու կարողությունը զարգացնելու համար կարևոր են գործնական աշխատանքները: Հաշվի առնելով ուսումնական առարկայի առանձնահատկությունները, գործնական աշխատանքները կարող են լինել տարբեր՝ տեղանքում կողմնորոշվել, չափումներ կատարել, քարտեզագրել, գործիքներով աշխատել, փորձեր կատարել, ձևավորել, մակետներ, պաստառներ, տեսանյութեր ստեղծել,

բանավեճ, քննարկում, դերախաղ իրականացնել, ՏՀՏ գործիքներ կիրառել և այլն:

«Ֆիզիկա» առարկայի գործնական աշխատանքներ են՝ ցուցադրումները, լաբորատոր աշխատանքները, խնդիրներ լուծելը, չափիչ սարքերով չափումներ կատարելը և այլն: Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի աշխատանքի ձևը, ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

1. վերարտադրողական. հնարավորություն է տալիս ցուցադրելու, թե ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն).

2. մասամբ որոնողական. սովորողը պետք է ոչ միայն ցույց տա, թե ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա).

3. ստեղծագործական. սովորողը պետք է ինքնուրույն կամ խմբի հետ լուծի առաջադրված խնդիրը՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, որի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլև մի քանի առարկաների կիրառման, այդ թվում՝ վերառարկայական հմտություններ):

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածն ու լսածը ներկայացնելը աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, ինչպես նաև նախագծի իրականացում և արդյունքների կիրառում: Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացնել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքով (դպրոցում, տանը կամ այլ վայրում) և գնահատվել բալերով կամ բառային բնութագրումներով:

Գործնական աշխատանք իրականացնելիս կարելի է կիրառել, օրինակ, դիտարկման քարտ: Դիտարկման քարտը կարող է ունենալ հետևյալ տեսքը.

Առարկա՝ քիմիա
Դասարան՝ 8-րդ
Թեմա՝ «Թթվածնի ստացումը»

Գործնական հմտությունների ձևավորում, զարգացում, բացահայտում	Սովորող 1	Սովորող 2	Սովորող 3
Սարքի հավաքում			
Հերմետիկության փորձարկում			
Փորձի կատարում՝ 1. ելանյութի ընտրություն, 2. փորձի պայմանների ընտրություն (նյութի տաքացում, սառեցում և այլն), 3. փորձի կատարում:			
Փորձի արդյունքների ամփոփում (գրել քիմիական ռեակցիայի, ստացած նյութի հատկությունների ուսումնասիրության արդյունքների, ռեակցիայի ընթացքի, պայմանների մասին և այլն):			
Փորձից հետո նյութերի հեռացում աշխատանքային սեղանից:			
Հավաքած սարքի ապամոնտաժում՝ պահպանելով անվտանգության կանոնները: Աշխատասեղանի վրայից ամեն ինչ հավաքել ու մաքրել:			
Կատարած աշխատանքի արդյունքների ամփոփում և եզրակացություն:			

Փորձի ընթացքում ուսուցիչը դիտարկում է սովորողների աշխատանքը և դիտարկման քարտի վրա նշումներ է կատարում.

+ սովորողի ճիշտ և ինքնուրույն կատարած գործողության համար,
✓ ուսուցչի դիտարկումներից հետո ինքնուրույն ճշգրտման համար,
* օգնությամբ կատարած աշխատանքի համար:

Աշխատանքի արդյունքները վերլուծելիս հորիզոնական սյունակում նշված չափանիշները կօգնեն ուսուցչին որոշել, թե դիտարկվող սովորողներից յուրաքանչյուրը կարողանո՞ւմ է արդյոք ինքնուրույն կատարել վերոնշյալ գործողությունները: Ուղղահայաց սյունակների գրառումների հետազոտությունն օգնում է ուսուցչին պարզելու, թե որ թեման են սովորողները բավարար յուրացրել, որ թեման կամ գործողության որ եղանակը լրացուցիչ աշխատանքի կարիք ունի:

Գործնական պարապմունքների ժամանակ մեծ ուշադրություն պետք է դարձնել տեխնիկայի անվտանգության կանոնների պահպանման՝ սովորողների հմտությունների ձևավորմանը:

Տնային աշխատանք

Տնային աշխատանքները՝ որպես ինքնուրույն գործունեության ձև, նպաստում են ինքնուրույն սովորելու հմտությունների ձևավորմանը: Տնային հանձնարարությունները պետք է լինեն փոքրածավալ, որպեսզի սովորողը չօգտագործի հանգստի, խաղի, սնվելու, նախասիրությամբ զբաղվելու և քնի համար նախատեսված ժամանակը: Տնային աշխատանքի համար պետք է հանձնարարել դասարանում կատարած առաջադրանքների նմուշներից: Տնային աշխատանքներ հանձնարարելիս կարելի է կիրառել նաև տարբերակված մոտեցում:

Տնային աշխատանքը պետք է ստուգվի, քննարկվի ու վերլուծվի հնարավորինս հաճախ, որպեսզի ձևավորվի պատասխանատվության զգացում և ընկալվի տնային աշխատանքի կարևորությունը: Պետք է նշել, որ պարտադիր չէ յուրաքանչյուր դասից հետո տնային աշխատանք հանձնարարել, հատկապես, եթե ուսուցիչը վստահ է, որ երեխաները յուրացրել են ուսումնական նյութը:

Տնային աշխատանքներ հանձնարարելիս կարևոր է, որ՝

- առաջադրանքները լինեն հասկանալի յուրաքանչյուր սովորողին, նա պետք է իմանա, թե ինչ և ինչպես պետք է կատարի,
- առաջադրանքի հետ տրվեն համապատասխան պարզաբանումներ, այլապես առաջադրանքը չի ծառայի իր նպատակին,
- անհրաժեշտության դեպքում, առաջադրանքները լինեն տարբերակված և անհատական՝ հաշվի առնելով սովորողների առանձնահատկությունները,
- առարկայի առանձնահատկությունը հաշվի առնելով՝ առաջադրանքները չլինեն միօրինակ, կարելի է ներառել ոչ ստանդարտ հարցեր,
- պարտադիր ստուգվի տնային աշխատանքը:

Տնային աշխատանքը կարելի է ստուգել տարբեր եղանակներով: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Առավել հաճախ տնային աշխատանքը ստուգելու ընթացքում կիրառվում է բանավոր հարցում: Ուսուցիչը տնային աշխատանքի վերաբերյալ տալիս է հարցեր, իսկ սովորողները պատասխանում են: Այդ ընթացքում բացահայտվում են սովորողների համար դժվար ընկալելի խնդիրները, ուսուցիչը դրանք խմբավորում է և պարզաբանում: Բանավոր հարցման միջոցով տնային աշխատանքը ստուգելը հնարավորություն է տալիս, որ մյուս սովորողները, հետևելով պատասխաններին, հասկանան, անհրաժեշտության դեպքում կարողանան ուղղել իրենց սխալները: Բանավոր հարցման ձև է նաև այն, որ ուսուցչի հայեցողությամբ սովորողը կատարում է առաջադրանքը՝ մեկնաբանելով այն:

Ստուգման կարևոր ձև է նաև ինքնագնահատումը կամ փոխադարձ գնահատումը: Ուսուցիչը կարող է առաջադրանքների ճիշտ պատասխանները նախապես գրել գրատախտակին, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան համեմատելու իրենց աշխատանքները ճիշտ պատասխանների հետ և շտկելու սխալները: Տնա-

յին առաջադրանքների ստուգումը հետաքրքիր դարձնելու համար ուսուցիչը կարող է համապատասխան թեմայի վերաբերյալ խաչբառ կազմել և առաջարկել սովորողներին՝ լուծել: Նրանք կարող են խաչբառը լուծել ինքնուրույն կամ խմբով:

Սովորողը, եթե չի կատարել տնային աշխատանքը, ապա ուսուցիչը պետք է անպայման պարզի պատճառները:

Նախագծային աշխատանք

Ուսումնական նախագծի նախապատրաստական փուլից մինչև ամփոփում և վերլուծություն ուսուցիչը և սովորողներն իրականացնում են ձևավորող գնահատում, որի նպատակն է հետևել նախագծային աշխատանքի իրականացման ողջ ընթացքին, վեր հանել աշխատանքի կատարման ընթացքում ի հայտ եկած դժվարությունները, բացթողումները, թերացումները, տրամադրել սովորողներին անհրաժեշտ տեղեկատվություն՝ հետագա աշխատանքը ճիշտ իրականացնելու և բարելավելու նպատակով: Նախագծի իրականացման ողջ ընթացքում ապահովվում է հետադարձ կապ ուսուցչի և սովորողների միջև: Ձևավորող գնահատման ընթացքում ուսումնական նախագծերի իրականացումը հետապնդում է նաև մեկ այլ նպատակ, որպեսզի սովորողներին հնարավորություն տրվի դասերն ինքնուրույն սովորելու, հետազոտություն կատարելու, տեղեկատվությունը հավաքագրելու և վերլուծելու, թվային ու մեդիա գրագիտության հմտությունները զարգացնելու: Այս նպատակով նախագծային աշխատանքներ կարելի է իրականացնել դեռևս տարրական դասարաններից սկսած:

Ուսուցչի ամենակարևոր խնդիրներից է՝ ստեղծել այնպիսի միջավայր, որը սովորողին դրդի նախագծային աշխատանքի ընթացքում ակտիվ լինելու, հարցեր բարձրացնելու և հարցերի պատասխաններն ինքնուրույն գտնելու:

Ուսուցիչը կազմակերպում և վերահսկում է նախագծային աշխատանքի յուրաքանչյուր փուլը, հետևում է, որ՝

- սովորողները չշեղվեն նպատակից,
- նրանց որոնողական գործունեությունը լինի նպատակային, ուղղված լինի արդյունքին հասնելու,
- նախագծային աշխատանքը լինի հետաքրքիր ու սովորողների համար իրագործելի:

Նախագծային աշխատանք կատարելու ընթացքում ուսուցչի և սովորողի դերը

Սովորող	Ուսուցիչ
Սահմանում է գործունեության նպատակը:	Օգնում է սահմանել նպատակը:
Սահմանում է վերջնարդյունքներ:	Օգնում է սահմանել վերջնարդյունքներ:
Ձեռք է բերում նոր գիտելիքներ:	Առաջարկում է տեղեկատվության աղբյուրներ:
Փորձարկում է:	Բացահայտում է աշխատանքի իրականացման հնարավոր ձևերը:
Ընտրում կամ գտնում է լուծումներ:	Օգնում է կանխատեսել արդյունքները:
Ակտիվ է:	Ստեղծում է պայմաններ սովորողի ակտիվ աշխատանքի համար:
Պատասխանատու է աշխատանքի համար:	Օգնում է գնահատել ընթացքը, բացահայտել ձեռքբերումներն ու թերացումները:
Իրականացնում է ինքնագնահատում ու փոխադարձ գնահատում (խմբային նախագծի դեպքում):	Որոշում է ձևավորող գնահատման գործիքները և սովորողների հետ մշակում է գնահատման չափանիշներ:
Ապահովում է հետադարձ կապ:	Ապահովում է հետադարձ կապ:

Նախագծային աշխատանքի գնահատումը պետք է լինի խթանող, սովորողներին պետք է խրախուսել: Կիրառվում են ձևավորող

գնահատման տարբեր գործիքներ: Օրինակ՝ կարելի է իրականացնել ինքնագնահատում, որի արդյունքում սովորողը կիմանա իր աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, իր ընտրած քայլերի արդյունավետությունը: Այն կնպաստի հետագա աշխատանքների բարելավմանը:

Ինքնագնահատումը կարելի է իրականացնել ստորև ներկայացվող աղյուսակով:

Չափանիշներ	Կարողանում եմ ինքնուրույն	Կարողանում եմ օգնությամբ	Դժվարանում եմ
Կազմել նախագծի աշխատանքային պլան:			
Օգտվել համացանցից՝ տեղեկատվություն գտնելու համար:			
Ընտրել անհրաժեշտ առաջադրանքներ ու նկարներ:			
Վերլուծել տեղեկատվությունը, առանձնացնել հիմնական տեղեկույթը:			
Նյութը դասավորել տրամաբանական հերթականությամբ:			
Ստեղծել սահիկաշար:			
Համագործակցել նույն նախագծի վրա աշխատող մյուս սովորողների հետ:			
Ներկայացնել նախագծային աշխատանք:			

Այս աղյուսակը կարելի է կիրառել նաև փոխադարձ գնահատում իրականացնելու նպատակով:

Ամփոփիչ գնահատում

1. Ամփոփիչ գնահատման նպատակը, ուսումնական առարկաների չափորոշիչներով ու ծրագրերով սահմանված վերջնարդյունքների համապատասխան, սովորողի ուսումնական ձեռքբերումների գնահատումն է ուսումնական գործընթացի որևէ փուլի ավարտին:

2. Ամփոփիչ (միավորային ու բնութագրող) գնահատման ձևերն ու մեթոդները, դրանց կիրառման հաճախականությունն ընտրում է ուսուցիչը: Դրանք քննարկվում են մեթոդական միավորման նիստում, ընդունվում են մանկավարժական խորհրդի նիստում, կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ մանկավարժական խորհրդի որոշմամբ:

Ամփոփիչ գնահատման արդյունքների հիման վրա ձևավորվում է կիսամյակային, իսկ կիսամյակային գնահատման արդյունքների հիման վրա՝ տարեկան ամփոփիչ գնահատականը:

Կարևոր է նկատի ունենալ, որ ամփոփիչ ստուգում կարելի է իրականացնել ոչ միայն թեմայի կամ կիսամյակի, այլև դասի ավարտին՝ արդյունքն ամրագրելով գնահատականով կամ բառային բնութագրումով (բոլոր դասարաններում, մասնավորապես, 1- 4-րդ դասարաններում):

Ամփոփիչ գնահատումն իրականացվում է միավորային ու բնութագրող գնահատման միջոցով:

Միավորային գնահատում

Միավորային գնահատման կիրառման դեպքում սովորողների ուսումնառության արդյունքների քանակական ցուցիչը գնահատականն է, որն արտահայտվում է նիշերով: Միավորային գնահատման համար կիրառվում է գնահատման 10 միավորային սանդղակ, որտեղ որևէ նիշ անբավարար գնահատական չէ:

Միավորային գնահատման արդյունքները գրանցվում են էլեկտրոնային դասամատյանում: Կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝

1) թեստ,
2) բանավոր հարցում,
3) գրավոր աշխատանք,
4) գործնական աշխատանք,
5) նախագծային աշխատանք,
6) և այլն:

Ամփոփիչ աշխատանք

Ամփոփիչ գրավոր աշխատանքն ամփոփիչ գնահատման ձև է, որի իրականացման ընթացքում սովորողն ուսումնական նյութը ներկայացնում է հիմնականում գրավոր: Ուսումնական առարկային ու թեմային համապատասխան՝ ամփոփիչ աշխատանքը կարող է լինել նաև բանավոր, գործնական կամ դրանց համադրմամբ: Այդ աշխատանքները տրվում են ծրագրային որոշակի թեմա (ենթաթեմա, թեմաներ) ուսուցանելուց հետո, որոնց նպատակն է պարզել, թե սովորողներն արդյոք յուրացրե՞լ են ուսումնասիրած նյութը:

Գրավոր աշխատանքի արդյունավետ ձև է **թեստը**, որը նվազագույն առաջադրանքների քանակով ու ժամանակի ծախսով առավելագույն արդյունք է ապահովում: Թեստը կազմելիս շատ կարևոր է պարզ պատկերացնել այն ուսումնական նպատակը, որի համար նախատեսված է:

Թեստային աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխանող առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով: Առաջադրանքները կարող են տրվել հարցարաններով, որոնցում ներառվում են տարաբնույթ առաջադրանքներ: Դրանցից են՝

- ճիշտ պատասխանի ընտրություն,
- համապատասխանեցում,
- լրացում,
- կարճ պատասխանով առաջադրանք,

- ընդարձակ պատասխանով առաջադրանք,
- ստեղծագործական և այլն:

Թեստի միջոցով, բացի սովորողի գիտելիքից ու հմտություններից, հնարավոր է ստուգել նաև արժեքային համակարգն ու վերաբերմունքը՝ ուսումնասիրվող առարկայի և ուսուցանվող թեմայի առանձնահատկությունների համաձայն:

Թեստի հիմնական հատկորոշիչները, որոնք կազմում են թեստի «նախագիծը», որոշում են թեստի կառուցվածքն ու բովանդակությունը: Դրանք են՝

- դասարանը,
- թեման կամ թեմաները,
- նպատակը,
- ստուգվող վերջնարդյունքները,
- առաջադրանքների տեսակը,
- հարցերի քանակը,
- հատկացվող ժամանակը,
- առաջադրանքին տրվող միավորը:

Թեստի հատկորոշիչներով ուսուցիչը հեշտությամբ կարող է ստեղծել հատկորոշիչների համապատասխան բազմաթիվ թեստեր: Թեստը կազմելիս պետք է հաշվի առնել մի շարք սկզբունքներ: Թեստը համարվում է **հուսալի,** եթե թեստի արդյունքները գրեթե նույնն են տարբեր օրերի նույն խմբին ստուգելու դեպքում, կամ միաժամանակ երկու համարժեք թեստերի տրամադրման դեպքում ստացվում են գրեթե նույն արդյունքները: Հուսալիությունը ստուգման արդյունքում գրանցված միավորի հարաբերական կայունությունն է:

Թեստը պետք է լինի **հավաստի**, այսինքն՝ ստուգի այն գիտելիքը, կարողությունն ու հմտությունը, որը նախատեսված է: Օրինակ՝ լեզուներում, եթե ուզում ենք ստուգել գրելու կամ կարդալու որևէ հմտություն, ապա ընտրած վարժությունը պետք է ստուգի միմիայն այդ հմտությունը: Թեստը, որպեսզի հավաստի լինի, պետք է առաջադրանքների տեսակները կամ ձևաչափը հայտնի լինեն սովորողներին:

Թեման ամփոփող աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ աստիճանի բարդության առաջադրանքներ: Կարևոր է ուշադրություն դարձնել թեմատիկ աշխատանքների արդյունքների վերլուծությանը և տվյալներն օգտագործել սովորողի ուսումնառության ընթացքը բարելավելու նպատակով:

Ամփոփիչ թեմատիկ աշխատանքների արդյունքների ցուցանիշները պայմանավորված են գնահատման մյուս տեսակների (հայտորոշիչ ու ձևավորող) գնահատման արդյունավետ իրականացման ընթացքից ու ճիշտ հերթագայումից: Այդ աշխատանքները կարող են գնահատվել միավորային տարբեր սանդղակներով, բայց պաշտոնական գրանցման համար դրանք պետք է բերել 10 միավորային սանդղակի: Ամփոփիչ աշխատանքներ կարող են համարվել նաև ռեֆերատը, էսսեն, գործնական աշխատանքը և գրավոր աշխատանքների տարբեր տեսակները:

Բանավոր հարցում

Ամփոփիչ գնահատման ձևերից է բանավոր հարցումը: Բանավոր հարցումը, որպես ամփոփիչ գնահատման ձև, կիրառելուց առաջ ուսուցիչը պետք է մտածի՝ արդյոք դասարանի սովորողների թիվը հնարավորություն տալի՞ս է, որ բանավոր հարցումը կիրառվի որպես ամփոփիչ գնահատման ձև: Քանի որ ուսումնական առարկաների մեծ մասի ժամերը սահմանափակ են, ուսուցիչը պետք է հնարավորինս կարճ ժամանակում իրականացնի ամբողջ դասարանի ամփոփիչ ստուգումը: Բացի այդ, բանավոր հարցումը գնահատման ոչ այնքան հավաստի և հուսալի ձև է: Նպատակահարմար է ամփոփիչ ստուգումը հիմնականում իրականացնել գրավոր ստուգման ձևերից որևէ մեկով: Բնականաբար, եթե դասարանը մեծ է, նպատակահարմար չէ ընտրել բանավոր հարցումը, քանի որ մեկ կամ երկու դասաժամը չեն բավականացնի, որպեսզի բոլոր աշակերտները ենթարկվեն բանավոր հարցման, եթե դասարանը փոքր է, ապա հնարավոր է: Բանավոր հարցում անցկացնելը նպատակահարմար է միայն այն

դեպքում, երբ առարկայի վերջնարդյունքները վերաբերում են սովորողի բանավոր խոսքի ձևավորմանն ու դրսևորմանը, այլ դեպքերում գնահատման այլ ձևերն ավելի արդյունավետ կարող են համարվել: Այդուհանդերձ, եթե ընտրվել է բանավոր հարցումը, ապա այն պետք է այնպես կազմակերպել, որ սովորողի պատասխանի միջոցով հնարավոր լինի ստուգել թեմայի վերաբերյալ նրա գիտելիքները, հմտությունները, վերաբերմունքն ու արժեքները:

Ամփոփիչ գնահատման արդյունքները մատյանում գրանցվում են մեկ սյունակում՝ ամբողջ դասարանի համար, եթե երկու դաս է տրամադրվել, ապա՝ երկու սյունակում:

Բանավոր հարցումը՝ որպես միավորային գնահատման ձև, ստուգում է, թե սովորողներն ինչպես են ներկայացնում ուսումնական նյութը, տվյալ ուսումնական նյութից ինչպիսի հարցերի և ինչ խորությամբ են պատասխանում: Ամփոփիչ գնահատման այս ձևի կիրառման համար պետք է հաշվի առնել թե՝

- ո՞ր թեմայի վերջնարդյունքներն են ամփոփվում,
- ի՞նչ հարցերի շուրջ է կառուցվելու բանավոր խոսքը,
- ո՞ր դեպքում, ի՞նչ միավորով կգնահատվի սովորողը (ըստ վերջնարդյունքի կատարման չափի մշակվում է սանդղակ): Օրինակ՝
- առարկա, դասարան՝

թեմա՝

վերջնարդյունքներ՝

https://drive.google.com/file/d/1HncFQ1MpNnM9H2bPuIP69DaZWPZpUJCY/view

Գործնական աշխատանք

Գործնական աշխատանքների կազմակերպումը և իրականացումն ուսուցման գործընթացում, թերևս, ամենակարևորներից են: Դրանք հենց այն տիրույթն են, որտեղ սովորողներն իրացնում են իրենց ակադեմիական գիտելիքները, հասկանում են, թե այս կամ

այն գիտելիքն ինչպես է կիրառվում գործնականում, որոնք են ուսումնասիրված նյութի իմացության արժեքը, կարևորությունը, օգտակարությունը և այլն: Սա նշանակում է, որ բոլոր ուսումնական առարկաները պարտադիր պետք է ներառեն գործնական աշխատանքներ, ինչպես նաև դրանք պետք է ամփոփել ու գնահատել: Տարբեր առարկաների վերջնարդյունքների միավորային գնահատումը գործնական աշխատանքով ավելի չափելի է և հիմնավոր: Օրինակ՝ տեղանքում կողմնորոշվելը, քարտեզագրելը և կողմնացույցից օգտվելու հմտությունները, բնագիտական առարկաների լաբորատոր սարքավորումների մասին գիտելիքները, դրանց անվտանգ կիրառումը, արդյունքների գրանցումն ու վերլուծությունը և այլն:

Գործնական աշխատանքի հատկորոշիչներն են.

- ո՞ր դասարանի համար է նախատեսված,
- ո՞ր թեմայի կամ թեմաների վերաբերյալ է գործնականը,
- ի՞նչ կոնկրետ նպատակ է հետապնդում,
- ո՞ր վերջնարդյունքներն են ստուգվելու,
- սովորողն ի՞նչ գործողություններ է իրականացնելու,
- որքա՞ն ժամանակ է հատկացվելու այդ աշխատանքի իրականացմանը,
- որքա՞ն միավոր է տրվելու յուրաքանչյուր ճիշտ կատարված քայլի համար:

Գործնական աշխատանքի համար ուսուցիչը նախապես պետք է կատարի հետևյալ քայլերը՝

1. պլանավորի գործնական աշխատանքի կազմակերպման ժամերը, թեմատիկ պլանում նշի գործնական աշխատանքի արդյունքում ապահովվող վերջնարդյունքները.
2. համապատասխան միջավայր ու գործիքակազմ ստեղծի՝ աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար.
3. կազմի սանդղակ՝ միավորային գնահատման համապատասխան չափանիշներով:

Ուսումնական նախագծի գնահատումը

Հանրակրթության պետական նոր չափորոշչով (ՀՊՉ) նախատեսված է, որ 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր սովորող պետք է տարվա ընթացքում իրականացնի առնվազն 1 նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից (ՀՊՉ, IX, 46):

Ուսումնական նախագիծը՝ ըստ տևողության, կարող է լինել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ: Կարճաժամկետ են կարճ ժամանակահատվածում իրականացվող նախագծերը (1-2 դաս, 1-2 շաբաթ): Երկարաժամկետ են այն նախագծերը, որոնց իրականացումը տևում է մեկ ամիս կամ ավելի: Մասնակիցների քանակի համապատասխան՝ նախագծերն անհատական են ու խմբային, ըստ բովանդակության՝ որևէ առարկային վերաբերող, միջառարկայական և ինտեգրված:

Ուսումնական նախագիծն իրականացվում է 3 հիմնական փուլերով՝ նախապատրաստում, ընթացք և ամփոփում:

Ներկայացնենք ուսումնական նախագծի գնահատման ընդհանուր մոտեցումները: Անհատական կամ խմբային նախագծերի դեպքում գնահատման չափանիշների մեջ առկա են որոշակի առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն գնահատում իրականացնելիս: Պետք է նաև հաշվի առնել, որ ուսումնական նախագծի իրականացման ժամանակ կարևորվում են ինչպես ընթացիկ աշխատանքները, այնպես էլ արդյունքներն ու դրանց ներկայացումը: Ուստի անհրաժեշտ է ուսումնական նախագծի նախապատրաստական փուլից մինչև ամփոփում իրականացնել ձևավորող գնահատում և այդ ընթացքում կատարել համառոտ գրառումներ, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում՝ ամփոփիչ գնահատման ժամանակ տվյալներն օգտագործելու նպատակով:

Ուսումնական նախագիծը, եթե գնահատվում է 10 միավորային սանդղակից տարբեր սանդղակով, վերջնական միավորը փոխարկվում է 10 միավորի: Ուսումնական նախագիծը, եթե գնահատվելու է,

օրինակ, 20 միավորային սանդղակով, կարելի է միավորները բաշխել ստորև ներկայացվող սկզբունքով:

Ընթացք՝ 6 միավոր, ընդ որում՝

- նախապատրաստական փուլ (թեմայի ընտրություն, նպատակի սահմանում, դերերի բաշխում, եթե խմբային է)՝ 1 միավոր,
- բուն ընթացք (խնդիրների ձևակերպում, հարցերի մշակում, պլանի կազմում, ժամանակի բաշխում, ռազմավարությունների ընտրություն, աղբյուրների ուսումնասիրում, տեղեկության հավաքագրում և վերլուծություն)՝ 4 միավոր,
- ավարտ կամ ամփոփում (վերջնական մշակում, աշխատանքի ձևավորում)՝ 1 միավոր:

Բովանդակություն՝ 8 միավոր, ընդ որում՝

- համապատասխանությունը թեմային՝ 3 միավոր,
- ամբողջականությունը՝ 2 միավոր,
- հիմնավորվածությունը՝ 2 միավոր,
- գրագիտությունը՝ 1 միավոր:

Ներկայացում՝ 6 միավոր, ընդ որում՝

- ձևը/միջոցը (սահիկաշար, ֆիլմ-հոլովակ, երաժշտություն, համերգ, նկար, պաստառ, գրքույկ, բեմականացում և այլն)՝ 3 միավոր,
- խոսքը՝ 3 միավոր:

Ուսումնական նախագծի գնահատման համար վերոնշյալ բաղադրիչներով պետք է սանդղակ (ռուբրիկ) ստեղծել, որտեղ բաղադրիչներից յուրաքանչյուրը գնահատվում է կատարման 4 մակարդակով՝ նվազման կարգով: Յուրաքանչյուր բաղադրիչի համար որոշվում է հաղթահարված մակարդակը և նշվում համապատասխան միավորը, վերջում բոլոր միավորները գումարվում են, և վերջնական միավորը փոխարկվում է 10 միավորային սանդղակի համապատասխան միավորի և մոտարկվում:

Նախագծի գնահատման սանդղակի օրինակը տես հետևյալ հղմամբ.
https://kznakgnahatum.blogspot.com/p/7-12-1-ix-46-3-10-10-20.html

Գնահատման 10 միավորային սանդղակ

Միավորային գնահատման յուրաքանչյուր ձևի կիրառմանը պետք է նախորդեն հայտորոշիչ ու ձևավորող գնահատումներ: Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է սույն կարգի 34-րդ կետում սահմանված և ուսուցչի ընտրած գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով: Սովորողի տարեկան գնահատականը ձևավորվում է կիսամյակային գնահատականների միջին թվաբանականով:

Սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման համար ներկայացված 10 միավորային սանդղակի գնահատման միավորների բնութագրիչներն ընդհանրական են, որոնք հստակեցվում են՝ ըստ առանձին ուսումնական առարկաների և գնահատման տարբեր ձևերի:

1	Ճանաչում է ուսումնական նյութի որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ ու գործողություններ:
2	Ճանաչում և տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտները, իրականացնում է պարզագույն գործնական գործողություններ՝ ըստ օրինակի:
3	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի փոքր մասը, իրականացնում է մտավոր ու գործնական պարզ գործողություններ՝ ըստ օրինակի:
4	Հիշողությամբ վերարտադրում է ուսումնական նյութի առնվազն կեսը, օրինակ, բանավոր կամ գրավոր նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր ու

	տարբերակիչ հատկանիշներն առանց մեկնաբանության, իրականացնում է մտավոր ու գործնական ոչ բարդ գործողություններ՝ ըստ օրինակի:
5	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները, թվարկում է ընդհանուր ու տարբերակիչ էական հատկանիշներն առանց դրանց բացատրության, իրականացնում է գործնական ու մտավոր գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի:
6	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութի ամբողջ ծավալի հիմնական մասը, նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները՝ կառուցվածքային կապերն ու փոխհարաբերությունները բացահայտող բացատրական տարրերով, կիրառում է գիտելիքները ծանոթ իրավիճակում՝ ըստ օրինակի, բանավոր, գրավոր կամ գործնական վարժությունների, խնդիրների, առաջադրանքների կատարման միջոցով:
7	Հասկանալով վերարտադրում է ուսումնական նյութն ամբողջ ծավալով, կիրառում է սովորածը ծանոթ իրավիճակում, նկարագրում ու բացատրում է ուսումնասիրվող օբյեկտները, հայտնաբերում և հիմնավորում է առերևույթ կապերը, փորձառությունից օրինակներ է բերում, կատարում է վարժություններ, խնդիրներ և առաջադրանքներ ծանոթ իրավիճակում՝ ցուցումների հիման վրա:
8	Տիրապետում է ուսումնական նյութին ու կիրառում ծանոթ իրավիճակում, մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը, հիմնավորում և ապացուցում փաստերով, եզրակացություններ է անում, ինքնուրույն կատարում է առաջադրանքները:
9	Լիարժեք տիրապետում է ուսումնական նյութին, կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ, ցուցաբերում է ստեղծագործական մոտեցումներ:

10	Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ, կառուցում ալգորիթմներ, ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու և ստեղծագործական հմտություններ:

Առաջադրանքների բարդության աստիճանի բնութագրիչները

1-ին աստիճանի բարդության առաջադրանքներ: Այս մակարդակի առաջադրանքները պահանջում են ճանաչում ու տարբերակում, տեղեկույթի մտապահում և հիշողությամբ վերարտադրում, պարզ գործողությունների կատարում:

Արտագրելը, հաշվելը, ճանաչելը, անվանելը, պարզ օրինակով առաջնորդվելը բնորոշ են 1-ին աստիճանի բարդության առաջադրանքներին:

2-րդ աստիճանի բարդության առաջադրանքներ: Այս մակարդակի առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրած ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների կայուն իմացություն, ոչ բարդ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, ոչ բարդ հիմնավորումներ և չեն պահանջում ինքնատիպ մոտեցումներ:

Որոշում կայացնելը, համադրելը, տեղեկատվությունը վերլուծելը, ամփոփելը, կռահելը, հաշվարկելը, բացատրելը, դասակարգելը բնորոշ են 2-րդ աստիճանի բարդության առաջադրանքներին:

3-րդ աստիճանի բարդության առաջադրանքներ: Այս մակարդակում սովորողները պետք է դրսևորեն ավելի վերացական մտածողություն, կիրառեն պլանավորման և ապացուցման հմտություններ: Առաջադրանքները պահանջում են արդեն ուսումնասիրած ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր իմացություն, բարդ կամ ոչ լրիվ ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, կողմնորոշման ու

կատարման համար ենթադրում են ինքնատիպ մոտեցումներ:

Կառուցելը, արտածելը, հիմնավորելը, մի քանի արժանահավատ պատասխաններ ունենալը, ոչ ստանդարտ խնդիրներ լուծելը, փորձ նախագծելը, արժևորելը բնորոշ են 3-րդ աստիճանի բարդության առաջադրանքներին:

4-րդ աստիճանի բարդության (առավել բարդ կամ աստղանիշով) առաջադրանքներ: 4-րդ մակարդակի բարդության առաջադրանքները պահանջում են ճանաչողական մեծ ջանքեր, արդեն ուսումնասիրած ծրագրային նյութին վերաբերող չափորոշչային գիտելիքների հիմնավոր ու խոր իմացություն, բարդ կամ անծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն, բազմակողմանի վերլուծություն, ստեղծագործական մոտեցում, տարբեր աղբյուրներից ստացած տեղեկությունների համադրում:

Հարցաթերթ մշակելը, հարցում անցկացնելը և արդյունքները վերլուծելը, տարբեր տեքստեր վերլուծելը, պահանջվող ոճով տեքստ շարադրելը, ստեղծագործելը կամ հարցին ստեղծագործաբար մոտենալը, արժևորելը, վարկածներ առաջադրելը բնորոշ են 4-րդ աստիճանի բարդության առաջադրանքներին:

Բանավոր հարցման գնահատման սանդղակ

Միավորներ	Գնահատման չափանիշներ
1	• Անվանում է թեման: • Թեմայի շրջանակում մեկ կամ երկու բառով ներկայացնում է որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ:
2	• Թվարկում է որոշ պարզ օբյեկտներ, երևույթներ: • Մի քանի բառով նշում է պարզ օբյեկտների կամ երևույթների նմանությունները կամ/և մեկ-երկու տարբերությունները: • Պատասխանում է պարզ հարցերի, որոնք ենթադրում են կարճ՝ մեկ բառով պատասխաններ:
3	• Վերարտադրում է թեմայի վերաբերյալ որոշ պարզ մտքեր կամ համառոտ կապակցված խոսք: • Պարզ նախադասություններով ներկայացնում է օբյեկտների կամ երևույթների որոշ նմանություններ ու տարբերություններ: • Թեմայի վերաբերյալ պատասխանում է հարցերի, որոնք պահանջում են պարզ՝ մի քանի բառով պատասխաններ (1-ին աստիճանի բարդության):
4	• Նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները: • Թվարկում է ընդհանուր և տարբերակիչ որոշ հատկանիշներ՝ առանց մեկնաբանության: • Պատասխանում է ուսումնական նյութի վերաբերյալ պարզ հարցերի (1-ին աստիճանի բարդության):
5	• Նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտներն ու երևույթները: • Թվարկում է ընդհանուր ու տարբերակիչ էական հատկանիշները՝ ըստ հայտնի կանոնների կամ օրինակի, առանց բացատրության: • Բովանդակության վերաբերյալ հարցերին տալիս է ճիշտ պատասխաններ (1-ին և 2-րդ աստիճանի բարդության):

6	• Նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտների և երևույթների միջև առերևույթ որոշ կապեր ու փոխհարաբերություններ: • Ինքնուրույն պարզ եզրահանգումներ է անում: • Ինքնուրույն մտքեր է արտահայտում: • Պատասխանում է միջին բարդության (2-րդ աստիճանի բարդության) հարցերին:
7	Նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտների և երևույթների կապերն ու փոխհարաբերությունները: • Հայտնաբերում ու հիմնավորում է առերևույթ կապերը՝ ցուցաբերելով քննադատական ու վերլուծական մտածողության տարրեր: • Սեփական փորձառությունից օրինակներ է բերում: • Խոսքը հստակ է, տեղին ու ճիշտ է օգտագործում հասկացությունները: • Միջին բարդության հարցերին պատասխանում է հիմնավորումներով (2-րդ աստիճանի բարդության):
8	• Մանրամասն նկարագրում է ուսումնասիրության օբյեկտները, բացահայտում է էությունը: • Հիմնավորում և ապացուցում է փաստերով, եզրակացություններ է անում: • Բարդ հարցերին տալիս է ճիշտ պատասխաններ (3-րդ աստիճանի բարդության)՝ ցուցաբերելով քննադատական ու վերլուծական մտածողություն: • Սեփական մտքերը շարադրում է ճիշտ՝ տալով հակիրճ կամ մանրամասն պատասխան:
9	• Առաջադրում է վարկածներ և ապացույցներ: • Առաջադրված բարդ հարցերին (3-րդ աստիճանի բարդության) տալիս է հստակ, ճիշտ և լիարժեք պատասխաններ՝ ցուցաբերելով քննադատական ու վերլուծական մտածողություն: • Խոսքը զարգացած է և տրամաբանված: • Նշում է պատճառահետևանքային կապերը:

10	Առավել բարդ հարցերին (4-րդ աստիճանի բարդության) տալիս է հստակ, հիմնավորված պատասխաններ: • Առաջ է քաշում սեփական վարկածները: • Իր խոսքով բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը: • Անկաշկանդ մեկնաբանում է ուսումնական նյութը, ինքնուրույն դատողություններ ու եզրահանգումներ է կատարում: • Խոսքում համադրում է տարբեր ուսումնական առարկաներից ստացած գիտելիքները և համապատասխան վերաբերմունք ցուցաբերում: • Մտքերն արտահայտելիս դրսևորում է ստեղծագործական մոտեցում:

Գործնական աշխատանքների գնահատման սանդղակ

Միավորներ	Գնահատման չափանիշներ
1	• Ճանաչում է ուսումնական նյութի պարզ օբյեկտները: • Օգնությամբ կատարում է որոշ պարզ քայլեր: • Օգնությամբ պահպանում է անվտանգության պարզագույն կանոնները: • Ընդգրկվում է խմբային աշխատանքներում և ուղղորդմամբ կատարում պարզագույն գործողություններ:
2	• Ճանաչում ու տարբերակում է ուսումնական նյութի պարզ օբյեկտները: • Իրականացնում է պարզ գործողություններ՝ ըստ օրինակի և ցուցումների: • Պահպանում է անվտանգության պարզ կանոնները: • Ընդգրկվում է խմբային աշխատանքներում և օգնությամբ կատարում պարզ առաջադրանքներ:
3	• Իրականացնում է պարզ գործողություններ՝ ըստ օրինակի: • Մասնակցում է գործնական աշխատանքին՝ ցուցումների համապատասխան:

	• Պահպանում է անվտանգության կանոնները՝ ըստ ցուցումների: • Մասնակցում է խմբային աշխատանքներին և ինքնուրույն կատարում պարզ առաջադրանքներ:
4	• Մասնակցում է գործնական աշխատանքներին և ինքնուրույն իրականացնում ոչ բարդ գործողություններ: • Պահպանում է անվտանգության բոլոր կանոնները՝ ըստ ցուցումների: • Մասնակցում է խմբային աշխատանքներին և ինքնուրույն կատարում ոչ բարդ առաջադրանքներ:
5	• Իրականացնում է գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների և/կամ օրինակի: • Դիտարկում ու նկարագրում է երևույթները: • Մասնակցում է խմբային աշխատանքներին և ինքնուրույն կատարում տարբեր առաջադրանքներ: • Գիտակցում է իր կատարած քայլերի պատճառահետևանքային կապերը:
6	• Իրականացնում է գործողություններ՝ ըստ հայտնի կանոնների: • Ինքնուրույն դիտարկում ու նկարագրում է երևույթները: • Տեղանքում կատարում է դիտումներ՝ օգտագործելով համապատասխան գործիքներ ու սարքավորումներ: • Պատասխանատվություն է կրում իր կատարած քայլերի համար: • Կատարում է փորձնական ու գործնական աշխատանքներ՝ համապատասխան նշումներով ու գրառումներով: • Խմբային աշխատանքների, խաղերի, մրցույթների ժամանակ ցուցաբերում է ակտիվ մասնակցություն:
7	• Հայտնաբերում ու հիմնավորում է առերևույթ կապերը: • Փորձառությունից օրինակներ է բերում: • Դիտարկում և մեկնաբանում է երևույթները: • Տեղանքի դիտարկում ու հետազոտություն է կատարում՝ օգտագործելով գործիքներ ու սարքավորումներ: • Գործնական ու փորձնական աշխատանքների հիման վրա նշումներ ու գրառումներ է կատարում: • Վերլուծում է առաջադրված տարբեր իրավիճակները և առաջարկում լուծումներ:

	• Խմբային աշխատանքների, խաղերի և մրցույթների ժամանակ ցուցաբերում է ակտիվ մասնակցություն: • Դրսևորում է պատասխանատու վարքագիծ:
8	• Մանրամասն նկարագրում է ուսումնասիրվող օբյեկտները: • Դիտարկում ու մեկնաբանում է երևույթները: • Կատարում է տեղանքի դիտումներ ու հետազոտություն՝ չափագրում է՝ կիրառելով գիտելիքները: • Գործիքներն ու սարքավորումներն օգտագործում է ճիշտ: • Փորձնական ու գործնական աշխատանքների հիման վրա կազմում է գրաֆիկներ, գծագրեր ու գծակարգեր: • Կողմնորոշվում է առաջադրված տարբեր իրավիճակներում, կայացնում է համապատասխան որոշումներ: • Խմբային աշխատանքների, խաղերի, մրցույթների ժամանակ ցուցաբերում է ակտիվ մասնակցություն: • Ցուցաբերում է արդյունավետ հաղորդակցվելու, համագործակցելու, կոնֆլիկտներից խուսափելու կարողություններ: • Դրսևորում է պատասխանատու վարքագիծ:
9	• Ուսումնական նյութի համապատասխան՝ ստացած գիտելիքները կիրառում է մասամբ փոփոխված իրավիճակում: • Առաջադրում է վարկածներ, ուսումնական խնդիրների լուծման նոր ճանապարհներ և ապացույցներ: • Ցուցաբերում է ստեղծագործական մոտեցումներ: • Դիտարկում ու մեկնաբանում է երևույթները՝ հիմնավորելով: • Կատարում է տեղանքի դիտումներ, հետազոտություն, չափագրում՝ կիրառելով ստացած գիտելիքները: • Գործիքներն ու սարքավորումները կիրառում է ճիշտ: • Գործնական ու փորձնական աշխատանքների հիման վրա կազմում է տարբեր սանդղակներ, գծագրեր ու գծակարգեր: • Կողմնորոշվում է առաջադրված տարբեր իրավիճակներում, կայացնում է համապատասխան որոշումներ: • Խմբային աշխատանքների, խաղերի, մրցույթների ժամանակ ցուցաբերում է ակտիվ և արդյունավետ մասնակցություն: • Ցուցաբերում է արդյունավետ հաղորդակցվելու, համագործակցելու, կոնֆլիկտներից խուսափելու կարողություններ, ինչպես նաև սեփական լուծումներն է առաջարկում:

	• Դրսևորում է հետևողական ու պատասխանատու վարքագիծ:
10	• Լիարժեք կիրառում է ուսումնական նյութն անծանոթ իրավիճակներում: • Բացահայտում է տարբեր երևույթների ներքին և արտաքին կապերը, օրինաչափությունները, առաջարկում է խնդիրների լուծման ռացիոնալ ուղիներ: • Գործիքներն ու սարքավորումները կիրառում է ըստ նշանակության և ճիշտ: • Գործնական ու փորձնական աշխատանքների հիման վրա կառուցում է ալգորիթմներ, գծակարգեր, սանդղակներ, գծագրեր: • Ցուցաբերում է ստացած արդյունքները վերլուծելու, գնահատելու հմտություններ: • Առաջադրանքները կատարելիս ցուցաբերում է ստեղծագործական մոտեցում: • Ցուցաբերում է արդյունավետ հաղորդակցվելու, համագործակցելու, կոնֆլիկտները խաղաղ կարգավորելու հմտություններ: • Խմբային աշխատանքների, խաղերի, մրցույթների ժամանակ ցուցաբերում է նախաձեռնություն, ակտիվ և արդյունավետ մասնակցություն: • Դրսևորում է պատասխանատու վարքագիծ: • Ինքնուրույն որոշումներ է կայացնում: